ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2022 թվականի N:394-ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՍՏՂԻԿ ԲԵՅԲՈՒՏՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայ օգնության միության «Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամի կողմից 2022 թվականի հուլիսի 20-ին տրված LL N 004930 անաշխատունակության թերթիկը և Աստղիկ Բեյբուտյանի 2022 թվականի հուլիսի 20-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող Աստղիկ Բեյբուտյանին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 2022 թվականի հուլիսի 20-ից մինչև դեկտեմբերի 6-ը ներառյալ:

2. Աստղիկ Բեյբուտյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող նշանակել նույն ընկերության ընտանեկան բժիշկ Անահիտ Բարխուդարյանին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է